Նախագծային աշխատանք

Նախագծի ղեկավարներ՝ Նելլի Ափիկյան, Գայանե Խաչատուրյան

Թեմա *Գրել առարկայական ծրագրի թեման, որի շրջանակում իրականացվելու է նախագիծը:*	
Նախագծի անվանում՝	**<u>Կանայք Ե. Չարենցի կյանքում</u>**
Առարկա(ներ)՝	Գրականություն և հայոց լեզու
Ուսումնական տարի, կիսամյակ՝	2023-2024, I
Տևողություն՝	8 շաբաթ
Դասարան՝	VII
Աշակերտների թիվ՝	12
Տեսակը՝	միջնաժամկետ
Ձևաչափը	☐տեսական ☐գործնական ☐անհատական **☑ <u>թիմային</u>** ☐ընթաիկ ☐ամփոփիչ

Նախագծի նպատակը

Աշակերտը պետք է իմանա՝

1. այն կանանց, ովքեր դարձել են Չարենցի ստեղծագործությունների ներշնչանքը:
2. այդ կանաց հետ առնչվող պատմությունների հիմնական դրվագներ,
3. նրանց նվիրված ստեղծագործությունների հիմնական բովանդակությունը,համառոտ բովանդակությունը.
4. ինչ է բանաստեղծական շարքը, բանաստեղծության տեսակը.
5. հիշատակված ստեղծագործությունների անծանոթ բառերը, բանալի բառերն ու արտահայտությունները

Նախագծի վերջնարդյունքները

Աշակերտը պետք է կարողանա՝

1. ներկայացնել Չարենցի ստեղծագործությունների ներշնչանքների կյանքի դրվագները, Չարենցին առնչվող պատմությունները.
2. արժևորել այդ կանանց դերը Չարենցի ստեղծագործական և անձնական կյանքում.
3. նրանց հուշերի միջոցով ամբողջացնել բանաստեղծի կերպարը.
4. ներկայացնել նրանց նվիրված ստեղծագործությունների հիմնական բովանդակությունը
5. ներկայացնել բանաստեղծական շարքի կառուցվածքը, ընդգրկած ստեղծագործությունները, բանաստեղծական տեսակները.
6. բացատրել անծանոթ բառերը, ճանաչել բանալի բառերն ու արտահայտությունները.
7. արտահայտիչ կարդալ կամ արտահայտել հատվածներ:

Նախագծի նկարագիրը
Դասերի ընթացքի նկարագրություն

1. **Ե. Չարենցի ստեղծագործությունների ներշնչանքների՝ կանաց մասին**

   ա) Աշակերտական զույգերի բաշխում
   բ) Կանանց ընտրություն
   գ) Աշխատանքի բաշխում

2. **Տեղեկություններ և պատմություններ ընտրված կանաց մասին**

   ա) Կենսագրական դրվագներ
   բ) Չարենցի հետ առնչությունների մանրամասներ
   գ) Հետաքրքիր պատմություններ

3. **Ստեղծագործություններ՝ նվիրված ստեղծագործական ներշնչանքներին**

   ա) Ստեղծագործական պատմությունը
   բ) Հատվածների ընթերցում և ընկալում

4. Ստեղծագործությունների կառուցվածքը, տեսակը, բովանդակությունը.

ա) «Երեք երգ տխրադալուկ աղջկան»

բ) «Էմալե պրոֆիլը Ձեր»

գ) « Ծիածան»

դ) «Տաղաբան»

ե) «Անվերնագիր», «Մորս համար գազել», «Հեռացումի խոսքեր»

զ) Այլ ստեղծագործություններ

5. Բանաստեղծական տեսակներ, շարքեր, կառուցվածքը, ընդգրկումը, հրատարակելու ժամանակը

6. Բառարան, բանալի բառեր և արտահայտություններ

ա) ՈՒսումնասիրվող ստեղծագործությունների անծանոթ բառերը
բ) «Բանալի» հասկացությունը
գ) Բանալի բառերը և արտահայտությունները, նրանց դերը

7. Բանաստեղծությունների, բանաստեղծական հատվածների և տեղեկությունների հավաքագրում, նկարների ընտրություն

8. Ամփոփում: Գրքույկի քննարկում

1. Գրքույկի կառուցվածքը
2. Բովանդակություն

Կարողունակություններ, որոնք կզարգանան այս նախագծի ընթացքում

1. Սովորել սովորելու կարողունակություն
2. Ինքնաճանաչողական և սոցիալական կարողունակություն
3. Լեզվական գրագիտություն և կարողունակություն
4. Մշակութային կարողունակություն
5. Թվային և մեդիա կարողունակություն

Միջառարկայական կապեր

1. Հայոց լեզու
2. Գրականություն
3. Պատմություն
4. Աշխարհագրություն
5. Երաժշտություն
6. Կերպարվեստ

Նախագծի վերջնարդյունքների ներկայացման տեսակներ

☑Գրքույկ

☐Ամսագիր կամ թերթ,պաստառ,

☐տեսանյութ

☐Սահիկաշար

☐Տեղեկատվական թերթիկ

Հետազոտության աղբյուրներ

1. Դասագրքեր
2. Համացանց
3. Հուշեր Չարենցի մասին
4. Չարենցի մասին ուսումնասիրություններ

Գնահատում

Նախագծային աշխատանքի գնահատում /16ժամ/												
<< Կանայք Չարենցի կյանքում, Չարենցի ստեղծագործությունների բառարանը >>									04.10.2023 - 29.11.2023թ			
N	Անվանում, անուն	ընթացք (6)			բովանդակություն (8)				ներկայացում(6)		Միավոր	գնահատական
		Նախա Պատրաստական (1)	Բուն ընթացք (4)	Ամփոփում (1)	Համա Պատասխանություն թեմային (3)	Ամբողջա Կանություն (2)	Հիմնավորվածություն (2)	Գրագիտություն (1)	Ձև (3)	Խոսք (3)		
1	Միրզոյան Նարեկ	1	4	1	2	2	2	1	3	3	19	9
2	Միսաքյան Սերգեյ	1	4	1	2	2	2	1	2	3	18	9
3	Երանոսյան Էլեն	1	2	1	2	2	2	1	2	2	15	7
4	Համբարձումյան Սուզաննա	1	2	1	2	2	2	1	2	3	16	8
5	Դանիելյան Լևոն	1	3	1	2	2	2	1	2	3	17	8
6	Բալթայան Վալերիա	1	2	1	2	2	2	1	2	2	15	7
7	Հարությունյան Նառա	1	3	1	2	1	2	1	2	2	15	7
8	Քոչարյան Մարիա	1	4	1	3	2	1	1	3	3	19	9
9	Հակոբյան Անի	1	3	1	3	2	2	1	3	3	19	9
10	Սիմոնյան Կիտաշես	1	3	1	2	2	2	1	3	3	18	9
11	Չթոյան Յուրի	1	3	1	2	1	2	1	3	3	17	8
12	Տոռոզյան Կիա	1	3	1	3	1	2	1	2	2	16	8

Հաշվետվություն

«Կանայք Չարենցի կյանքում»
նախագծային աշխատանքի վերաբերյալ.

«Կանայք Չարենցի կյանքում » նախագծային աշխատանքը նպատակ ուներ բացահայտելու այն կանանց, ովքեր ներշնչանքի աղբյուր դարձան մեծ բանաստեղծի ստեղծագործական կյանքում, իմանալ նրանց նվիրված ստեղծագործությունները։ Այս աշխատանքը ընտրել էին 7-րդ դասարանի տասներկու աշակերտներ, որոնք բաժանվեցին երկու խմբի։ Յուրաքանչյուր խմբում վեց աշակերտ ձեռնամուխ եղան նախագծային աշխատանքի իրականացմանը, ինչի վերջնարդյունքում ստեղծվեց գիրք-տետր՝ ստեղծագործական ներշնչանքների, Չարենցի հետ առնչությունների, ստեղծագործությունների, բառապաշարի մասին։

2023թ. հոկտեմբերի 4 – ից սկսվեցին մեր աշխատանքները։ Յուրաքանչյուր խմբում ստեղծվեց աշակերտների երեք զույգ, որոնց մեջ բաշխվեցին ստեղծագործական ներշնչանքները։ Աշակերտները ոգևորությամբ ձեռնամուխ եղան աշխատանքին։ Նյութեր քաղեցին և՛ գրքերից և՛ համացանցից։ Յուրաքանչյուր հաջորդ հանդիպման ընթացքում աշակերտները հանգամանորեն ներկայացնում էին կատարած աշխատանքները, գնահատվում, ստանում նոր հանձնարարականներ։ Ընթերցվում էին բանաստեղծական հատվածներ, բացահայտում բովանդակությունը, բառապաշարը։ Խմբի ոգին հատկապես Նարեկ- Սերգեյ զույգն էր, որը սիրով կատարում էր և՛ բովանդակային և՛ տեխնիկական աշխատանքներ։ Ուշագրավ է, որ մասնակից աշակերտները իրենց ձեռք բերած գիտելիքները տանում էին դասարաններ և քննարկում դասընկերների հետ։

2023թ. նոյեմբերի 29-ին ավարտվեցին հետազոտական աշխատանքները և աշակերտները ներկայացրեցին նկարազարդված գրքույկը՝ համապատասխան բաժիններով, իսկ 2023թ. նոյեմբերի 30-ին իրենց վերջնարդյունքը ներկայացրին հանձնաժողովին։

Առաջարկություններ

1. Դպրոցի գրադարանում ստեղծել համապատասխան գրականության բազա
2. Սահմանել աշակերտի նվազագույն և առավելագույն ծանրաբեռնվածությունը նախագծային աշխատանքներում
3. Համացանցում տեղադրել նախագծային աշխատանքի ընթացքը, դասը ներկայացնող սահիկաշարեր
4. Ավելի հստակեցնել ուսուցչի դերը այս աշխատանքում
5. Նախագծի վերջնարդյունքների տեսակները շատացնել: